



LEPSIUSHAUS
POTSDAM

internationales literaturfestival  berlin

Համաշխարհային ընթերցում հայոց մեծ եղեռնի զոհերի հիշատակի 100-ամյա տարելիցի կապակցությամբ 2015 թ. ապրիլի 24-ին

2015 թ. ապրիլի 24-ին հայոց մեծ եղեռնի զոհերի հիշատակի 100-ամյա տարելիցի կապակցությամբ Բեռլինի գրականության միջազգային փառատոնը (internationales literaturfestival berlin) և Պոտսդամի Լեպսիուսի Տունը (Lepsiushaus Potsdam) համաշխարհային ընթերցման կոչ են անում՝

Հարյուրավոր հայ մտավորականներ - գրողներ, երաժիշտներ, պատգամավորներ և հոգևորականներ 1915 թ. ապրիլի 24-ին Կոստանդնուպոլսում (այսօրվա Ստամբուլ) ձերբակալվել, Թուրքիայի կենտրոն արտաքսվել և մեծ մասամբ սպանվել են՝ Սա համարվում է մարդկության դեմ կատարված հանցագործության սկիզբը՝ Հայերի ցեղասպանությունը առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում առաջին ժամանակակից համակարգված, ծրագրված և իրականացված ցեղասպանությունն էր, որին զոհ գնացին ավելի քան մեկ միլիոն հայեր Օսմանյան Կայսրությունում՝

Իրադարձությունները տեղի էին ունենում համաշխարհային հանրության աչքի առջև, որոնք լավագույնս թաքնված են գերմանական, ավստրո-հունգարական, իտալական, սկանդինավյան, ամերիկյան, հայկական և օսմանյան աղբյուրներում, ինչպես նաև բազմաթիվ պատմական հետազոտություններում՝ Արդեն 1915-ի օգոստոսին Նյու Յորք Թայմսը խոսում էր մեթոդաբանորեն ծրագրված էթնիկ գտումների և ոչնչացման մասին, որոնք պատմության ընթացքում դեռևս երբեք չէին հանդիպել՝ Օսմանյան Կայսրության դաշնակից Գերմանական Կայսրության կառավարությունը հանգել է նույն վերջնարդյունքին, առանց դրա դեմ որևէ բան ձեռնարկելու՝

Թուրքական քաղաքականությունը մինչ այսօր հերքում է հայերի դեմ Օսմանյան Կայսրության իրագործած ցեղասպանությունը, չնայած փաստերը ավելի քան 100 տարի է բացահայտ են՝ Հնդիկ գրող Արունդհասի Ռոյը 2009 թվականին բեռլինի գրականության միջազգային փառատոնում այս սկանդալը, ի թիվս այլոց հասարակայնորեն բացահայտել է՝

Բազմաթիվ հայկական ձայներ 1915-ին և նրան հաջորդած տարիներին լռության են մատնվել՝ Մյունխենը այդ ժամանակվանից ի վեր բարձրաձայնել են և հանդես եկել մոռացության դեմ, այդ թվում նաև թուրքական քաղաքացիական հասարակության աճող ձայները՝ Խոնարհվելով զոհերի հիշատակի առաջ և

գուգորդվելով ցեղասպանության միջազգային ճանաչման պահանջատիրությամբ, կոչ ենք անում Ձեր մասնակցությունը բերել 2015 թվի ապրիլ 24-ին հայ հեղինակների՝ Սիամանթոյի, Կոմիտասի, Եղիշե Չարենցի, Վիլյամ Սարոյանի, Հովհաննես Շիրազի, Պարույր Սևակի, Հակոբ Մնձուրու, Սիլվա Կապուտիկյանի և Հրանտ Դինքի ստեղծագործություններից հատվածների համաշխարհային ընթերցմանը՝

Առաջին ստորագրողներ՝ Ռուֆ Հոսֆելդ, Կոնրադ Քուհն, Ուլրիխ Շրայբեր, Հասմիկ Պապյան